Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ԴԵԿՏԵՄԲԵՐ 15 1892 ԹԻՒ 24

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as seccond-class mail matter. at P.O.NewYork NY

— Արաբկերի վերջին կարեւոր անցից ականատես եղող անձանց հետ տեսնուած և եղելութիւններն ուսումնասիրելու հարցփորձի ենթարկած լինելէ յետոյ՝ խմբագրեցինք այն յօդուած զոր ներկայ թուոյ մէջ կը գտնեն ընթերցողք՝ «Արաբկերի Շարժումն» խորագրի տակ։ Յեղափոխական շարժմանց քննական պատմութեան փոքրիկ գլուխ մ'է այն, որում պիտի յաջորդէ երկրորդ գլուխ մ'ալ։

— Գամառ Քաթիպայի լաւ յաջողեալ պատկերն հանդերձ կենսագրութեամբ հրատարակել մտադիր էինք, բայց սոփպուեցանք յաջորդին յետաձգել տեղւոյ անձկութեան պատճառաւ։

— Պուլկարիայի Ռ. քաղաքէն թղթակից մի քաջ քննադատութիւն մի յղած է մեզ ընդդէմ Եւրոպա հրատարակուող հայերէն թերթի մի։ Հակառակ մեր բազմակրկնակ յայտարարութեանց թէ չեմք ուզեր վիճիլ, ստացած եմք այս տարի 25—30 այսպիսի նամակներ։ Դոքա շատ լաւ գրուած են, սակայն մեք մերժեցինք հրատարակել, և կը խնդրեմք որ այդ կարգի նամակներ գալ տարի ևս մեզ յղելու յոգնութիւնն չկրեն մեր պատուական թղթակիցք։

Այնքան գծուծ և անտեղի վիճաբանութեամբք արատաւորուած է հայ լրագրութիւն, որ մեզ կը թուի թէ առ ժամանակ մի միւս ծայրն անցնիլ և արդար վիճաբանութենէ խակ խորշիլ օգտակար է։

— Եգիպտոսէ, Պուլկարիայէ, Կ. Պոլսէ և Միացեալ Նահանգաց շատ կողմերէն նամակներ եկան առ «Հայք»ի խմբագիրն, զսա քաջալերելու համար որ շարունակէ թերթին հրատարակութիւնն, կամ ժողովուրդն յորդորելու համար որ օգնէ հրատարակութեանն։ Շնորհակալ եմք մեր պատուական թղթակիցներէն, այլ չեմք կարծեր թէ այդ թղթակցութիւններն հրատարակելու տեղի կայ, քանի որ ժողովուրդն գործնական աջակցութիւն ընելու համար յորդորի կարօտ չերևիր։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտատը փոստ թի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Branch E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ

Մեծայարգ Տի. Մ. Զերազ իւր թերթի անգլիերէն հրատարակութիւնն գադրեցուցած է չորրորդ տարւոյն սկիզբէն, և միայն ֆրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱռմէնին», ամիսն մէկ անգամ։ Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սենթ կամ 18ֆր. 75սանթիմ։ Հասցէն է.—33 DE VERE GARDENS, LONDON, W. ENGLAND

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խօսք առ Հայրենասէրս. — Արաբկերի Շարժումն. — Տփղիսի Հայ Լրագրութիւնն և Հայերէն Լեզուն. — Նամակ Կ. Պոլսէ. — Նամակ Զմիւռնիայէ. — «Հայք» 1893 Թուականին. — Ազգային Լուրեր.— Տեղական Լուրեր.— «Հայքի» Շնորհակալութիւնք,

ԽՕՍՔ ԱՌ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՍ

Հայրե՛նասէրներ,

Ուժասպառ՝ հազիւ կը յուսայի ցվերջ Բ. տարւոյս կարենալ կրել միութեան դրօշն, և ահա հարիւրաւոր երիտասարդ բազուկներ բարձրացան աշխուժիւ և վեր բռնեցին զիմ խոնջած բազուկ։

Օրհնե՛ալ բազուկներ, օրհնե՛ալ հոգիներ։

Ի խորագոյն խորոց սրտիս շնորհակալ եմ ձեզ, և ցնծագին յուզմամբ կը ծափահարեմ զայս փառաւոր յաղթանակ հայ հանրային ողջմտութեան։

«Հայք», զոր ոմանք իբրև գործի թուրք կառավարութեան և իբրև մատնչական հռչակել ջանացին, եղաւ և հետզհետէ աւելի կը ճանաչուի բերանն հայ հայրենասիրաց։

«Հայք» որքան և հպարտանայ ասոր համար, բնաւ չամբարտաւանիր, քանզի լաւ գիտէ թէ ժողովրդեան զգօնութեան մանաւանդ քան թէ իւր արժանեաց կը պարտի իւր այս զարմանալի յաջողութիւն և ի դէպ կը համարի այս առթիւ յայտարարել թէ իւր գլխաւոր արժանիքն եղաւ ճիշդ այն վստահութիւն զոր ունեցաւ ժողովրդային ողջմտութեան վերայ, որով և խոյս տուաւ ինքզինք պաշտպանելէ ընդդէմ անոնց, որք անդադար գրգռեցին զինքն ի սին վիճաբանութիւն։

Այժմ, հանրային համակրութեան ջերմ և գործնական ցոյցեր վարձատրելով «Հայք»ի համբերատար լռութիւնն, և՛ս առաւել կը հաստատեն զայն իւր կռուախոյս ուղղութեան մէջ և մեծ դատ մի կուտան ազգային լրագրութեան։

Հայրե՛նասէրներ, դէպ ի «Հայք» ձեր այս համակրալիր վարմունք անհուն նշանակութիւն ունի գաղթական Հայոց մտքի ներկայ վիճակին և ապագայ հաւանական ընթացքին նկատմամբ։

«Հայք»ի յաջողութիւնն յստակօրէն կը ցուցնէ թէ գաղթական Հայ Աշխարհն կը համակրի տիեզերական միութեան գաղափարին, որոյ անարժան դրօշակիրն է «Հայք»։

«Տիեզերակա՛ն Միութիւն» ըսին ոմանք հեգնօրէն, «ի՜նչ մեծ բառ և ի՜նչ սին երազ»։ Երա՞զ։ ո՛չ։ Ամերիկայի Հայ Գաղթականութիւնն յղի է բազմաճղի ահագին միութեամբ մի, զորոյ ծնունդ կը յուսամք տեսնել 1893ին

Ուրիշ գաղթականութեանց մէջ ևս դոյ եղող Ցանձնախմբեր, Միաբանութիւններ հետզհետէ տիեզերական Միութեան դրօշի ներքև կը ժողովին։

Հակառակորդք ի զուր կը հնարին վատահամբաւել զմեզ, քանզի այդ խմբակցութիւնք չեն միանար մեր անարժան և աննշան անձնաւորութեան շուրջ, այլ կեդրոնացման մեծ և փրկաւէտ դրօշին ներքև։

Պէտք է նա և գիտնալ թէ մեք երբէք ըսել ուզած չեմք թէ ամեն գաղթական հայ կամ ամեն ընկերակցութիւն պիտի կապուի տիեզերական կեդրոնին։ Այդ ոչ միայն անգործնական է այլ և անբաղձալի առ այժմ։

Երբ եւրոպեան այլ և այլ երկրաց մէջ, ի Հնդիկս, ի Ճաւա, յԵգիպտոս և ի Միացեալ Նահանգս, ընդհանուր կեդրոնի մի հետ կապուելու պատրաստ խմբակցութեանց թիւն 20, 30 կամ 40ի հասնի, յայնժամ կեդրոնի համար անդամներ պիտի կրնան ընտրուիլ այդ խմբակցութեանց քուէարկութեամբ, և ընտրեալք պիտի ներկայացուցեն ընտրող մարմնոց բովանդակն, և պիտի կարենան պատշաճօրէն կոչուիլ Տիեզերական Ցանձնախումբ կամ Գաղթային Կեդրոնական Ժողով կամ Խորհուրդ Հայոց։

Խնդիրն բառի վերայ չէ, այլ ոյժերն, — դրամական և իմացական ոյժերն— միացունելով աւելի վստահութիւն ներշնչելու և աւելի մեծ զօրութեամբ գործ յառաջ տանելու վերայ։

Կեդրոնական Ցանձնախումբն Հայ Աշխարհի սիրտն և ուղեղն պիտի լինի միանգամայն։ Այդ սրտի հետ կապուած պիտի լինին գաղթական Հայոց Ցանձնախմբեր որպէս երակներ, և Գաղթային Հայ Աշխարհի ոյժն, սնունդն, արիւնն պիտի հոսի ասոր դէպ ի սիրտն կեդրոնական, և անտի՝ այդ սրտէ պիտի նետուի իբրեւ շընչերակաց միջոցաւ դէպ ի մայր հայրենիս և կեանք պիտի տայ նմա, արիւն և աւիւն և ոյժ պիտի հոսեցունէ նորա երակաց մէջ։

Այդ կեդրոն պիտի լինի նաև ուղեղ։ Երբ Հինդ փորձառու, հայրենասէր, խորապէս մշակեալ, ազնիւ հայ գործիչներ քուէիւք 30—40 Ցանձնախմբոց կոչուին ի միութիւն, նոքա խելք խելքի, փորձառութիւն փորձառութեան միացուցած՝ պիտի լինին արդարև մարմին մի, զոր յոյժ դժուար պիտի լինի խաբել, կամ վատահամբաւել։ 100 Հայերուն 80ն գոնէ պիտի վստահին իրենց դրամ և իրենց աջակցութիւն այդպիսի կեդրոնի։

Ահա այդ է մտաւոր և նիւթական հզօր զօրութեան պայման։

Պիտի իրանայ այդ փրկաւէտ պայման, հայրենասէ՛րներ, աշխատեցէք կրկնապատկեալ եռանդեամբ, փութացէ՛ք, ամեն զոհողութիւն և համբերութիւն կ՚արժէ ընել այդ նպատակի համար։

«Հայք» իւր բաժին պիտի կատարէ 1893ին ևս, և պիտի կատարէ նորոգեալ ուժով և աւելի ևս զարգացեալ և ճոխացեալ։

Հայրե՛նասէրներ, ՑԱՌԱՀ։

ԱՐԱԲԿԵՐԻ ՇՈՒՐԹՈՒՄՆ

Արաբկերի Հայոց խլրտումներն Հայոց Պատմութեան մէջ պիտի յիշուին իբրև նախագուշակ ցնցմունք այն մեծ շարժի, որ գուցէ մօտաւոր ապագայի մէջ տեղի ունենալով գահեր դրդուէ և ժայռեր պատռէ...։

Արաբկերի Հայք ոչ առաւել ոչ նուազ յեղափոխասէր կամ յանդուգն են քան զայլ քաղաքացիս։ Եւ եթէ Արաբկերցիք իրենց անսպասելի կացիւք ու գնացիւք կառավարութեան երկչոտ ուշադրութիւնն հրաւիրեցին իրենց վերայ, դորա առաջին և գլխաւոր պատճառն՝ Եղնիկ Եպիսկոպոս Ապահունեոյ, իրենց առաջնորդին, ազդեցութիւնն էր։ Աւելցունելով դորա վերայ և զՇմաւոնի, Արաբկերի Հայոց ազգային վարժարանին դասատուի, հզօր ազդեցութիւնն, և կ՚ունենամք բոլոր գաղտնիքն։

Եղնիկ Եպ. արդէն միանգամ առաջնորդ եղեր էր Արաբկերի, և մեք յԱկն լսեր էինք նորա հռչակն իբրեւ պատկառելի և կորովի առաջնորդի, որում կը դիմէին քաղաքին և շրջակայից ժողովուրդք իրենց առևտրական և այլ վէճեր վճռել տալու համար իբրև դատաւորի։

Երբ երկրորդ անգամ կարգեցաւ նա յառաջնորդութիւն Արաբկերի, ազգային իրաց ընդհանուր վիճակն շատ փոխուած էր, և Ապահունի սկսաւ գործել առաւել ապահօրէն։

Երբ քաջ եպիսկոպոս մի առաջնորդէ, ժողովրդեան մէջ ինչ անայտ կամ թմրած քաջեր որ կան, կ՚ելնեն երեւան, և որք արդէն աներկիւղ են, կը լինին յանդուգն։ Ըստ այսմ Արաբկերի Հայեր քիչ ժամանակի մէջ կրեցին շատ այլակերպումն, և Բաց-գլխենց Փիլիկ անուն ոմն ծեծեց զԱրաբկերի գայմագամն։

Խարբերդի վալին փախուց հեռացուց իւր գանակոծեալ տեղակալ։ փոխանորդն որ նորա տեղ յղուեցաւ. չկրցաւ գոհացուցիչ արդիւնք տալ։ Այն քաղաքի համար, ուր Եղնիկ կը գտնուէր, ամեն գայմագամ չէր կըրնար պաշտօն վարել. արտակարգ ուժի տէր ոմն հարկ էր գտնել, որ կարենար ի կշիռ գալ Ապահունեոյ հետ։

Եւ գտնուեցաւ ոմն Մուհամմէտ Ֆէհմի, նախորդ գայմագամ Պէսնիի և Ատիեմանի կողմանց, և յղուեցաւ յԱրաբկեր։

Նոր գայմագամն Հայոց թաղին մէջ հաստատեց իւր բնակութիւն, և բարեկամական սերտ յարաբերութիւն մշակեց նոցա երևելեաց հետ։ Արդարասէր, մինչև անգամ հայասէր կ՚երևէր, բաւական թոյլ մահմետական՝ հազիւ երբէք գնալով ի մզկիթ։

Զմայլեցան Հայք, իսկ Թրքեր նախ խոժոռած՝ տակաւ գարշելով խորշեցան իրենց կրօնակցէն մինչեւ գանգատանաց հանրագիր գրել յղել ի Խարբերդ, խնդրելով վալիէն պաշտօնանկ ընել իւր այդ հայասէր և ամբարիշտ տեղակալ։

Վալին ժպտեցաւ և հանրագիրն յղեց ետ՝ առ գայմագամն։ Սա, օր մի, ի ներկայութեան Թրքերու և Հայերու՝ պատմելով հանրագրի դէպքն՝ արտաբերեց հետեւեալ իմաստն.— «Ես այսր յղուած եմ ոչ ի մզկիթ յաճախելու և Սուլթանին կենացն համար աղօթելու, քանզի եթէ ինձ յանձնուած պաշտօն այդ լինէր, յղուած պիտի լինէի ի թէքքէ ինչ։ Ես հոս եկած եմ ոչ աղօթել այլ կառավարել։ Ինչո՞ւ դուք, Թուրքդ, կը զչարիք տեսնելով թէ Հայոց հետ ընկերային սերտագոյն յարաբերութեամբ կապուած եմ և նոցա տներն կ՚այցելեմ. գիտցէք թէ այսպէս կ՚ընեմ ոչ վասն զի զձեզ կ՚ատեմ, այլ զի զնոսա աւելի կը յարգեմ, նոցա՛ մէջ միայն գտնելով խելացի և շնորհքով անձնաւորութիւններ, որոց հետ տեսակցիլ ընկերային մեծ հաճոյք է ինձ»

Ֆէհմի իւր պաշտօնավարութեան առաջին ամիսներն այսպէս անցուց Հայոց թաղին ու սրտին մէջ, նո-

ցա հետ կերաւ ու խմեց, զբօսաւ, քննեց, կշռեց, և ամեն ինչ իմանալէ յետոյ քաշուեցաւ գնաց հեռու ի հայոց, Տաճկաց մէջ, փոխելով իւր բնակարան և իւր ընթացք միանգամայն։

Թուրքք յայնժամ չունչ առին ի խորոց և փառք տուին Ալլահի որ դարձի բերած է կեավուր սիրող զայմագամն։

Գայմագամին ճարտար ռազմակերպերուն կամ թաքթիքներուն յաջող արդիւնքն ամեն ակնկալութիւն անցան։ Նոյն ինքն այն Փիլիկ որ զնախորդ գայմագամն ծեծած լինելու յանցանօք բանտարկեալ էր, Ֆէհմիէ կաշառուելով խաֆիյէ գրուեցաւ, և իւր պաշտօն մասնչի կը շարունակէ դեռ 300 գահեկան ամսաթոշակով։ Փիլիկ բազում գաղանեաց բանալի մ'էր, զոր Ֆէհմի գնած ունէր ի ձեռին։ Ուրիշ ո՞րքանեաց սիրան ու երիկամունքն զննեց, ո՞գիտէ, այդ առաջին ժամանակներն երբ ամեն հայ զնա հայասէր կը համարէր։

Ալ կրնար Ֆէհմի, այդքան պատրաստութենէ յետոյ, մրցիլ Եղնկայ հետ։

Մեծ յուզումն որ տեղի ունեցաւ Փոլիս Եուսուֆի սպանման առթիւ, ի հանդէս բերաւ երկուց կողմանց կարողութեանց վիճակն։

Եուսուֆ հայագէտ և ըստ երևոյթին հայասէր և լուսամիտ Թուրք մ'էր, և Հայոց հետ սերտ յարաբերութիւններ հաստատած էր ճիշդ զայմագամին պէս, սա տարբերութեամբ որ Եուսուֆ աւելի ընդարձակ շրջանի մէջ կը գործէր և իւր կեղծաւորութիւն կը հասցուներ մինչև ազգային ու հայրենասիրական երգեր երգել Հայոց հետ։

Ապացուցուեցաւ սակայն թէ Եուսուֆ գաղանեաց օձաբնոյթ որսորդ մ'էր, ճկուն ու սողսկուն եղանակաւորուտ գտնելով ամեն ծակ — եւ գարշելի եղաւ Հայոց։

Երեկոյ մի նա ի խնջոյս էր նշանաւոր Թրքի մ'ի տան։ Ըմպելեաց ազդեցութեան տակ՝ փոլիսն ունեցաւ դաժան բանակռիւ մի բազմականաց միոյն՝ Շէքիր Էֆէնտիի հետ։ Ճիշդ նոյն գիշեր Եուսուֆ, ի դարձին, տան դրան առջեւ, սպանուեցաւ չարաչար։

Նա բազում վէրք ընդունած էր, իբրև ի հարուած կացինի կտրուած էր գանկն, վիթխարի ուժի տէր մարդու ահաւոր բազուկն գործ կատարած էր նորա վերայ։

Ո՞վ էր սպաննողն, կամ ո՞յք էին։ Խնդիր կնճռուտ։ Սպանեալն թշնամի ունէր զՀայս՝ատի, և զՇէքիր Էֆէնտի՝ անտի։ Գայմագամն բանտարկեց զՇէքիր, որոյ վերայ կը ծանրանային հաւանականութեան փաստեր, ըստ որում ոճրի գիշերն նա ցասմնալիր պայքար մ'ունեցեր էր Եուսուֆի հետ և քանզայլ հրաւիրեալներն վաղագոյն մեկներ էր խնջոյքէն։

Նոյն ատեն, այսինքն ոճրի հետեւեալ առաւօտն, տեսարանին մօտէն անցնող Հայեր ևս ձերբակալուելով, մինչև 53 հոգի, դրուեցան ի բանտ։

Խնդիրն պարզ ոճիր մի չէր նկատուէր, այլ քաղաքական բնութիւն ունեցող արարուած։ Բովանդակ քաղաքն ի ծուփս էր։

Խարբերդէն եկան հասան յատուկ քննիչ պաշտօնեաներ, հանդերձ 27 հեծեալ զօրօք։ Դատաքննութեան բովէն անցան բանտարկեալք, ազատեցաւ Շաքիր, ինչպէս նաև Հայերն, բայց յերեքէն։

Պիտի ուզէին ձերբակալել և զԴանիէլ, որ սակայն չէր ի միջի։

Դանիէլ հայ երիտասարդ մ'էր, տիպար երիտասարդ մի, մանաւանդ հսկայ, բնաւորութեամբ արի, սրտիւ եռանդուն, ոգւով հայրենասէր։

Որոշուած էր որ երեք կարծեցեալ ոճրագործներն երեքշաբթի առաւօտ ճամբայ հանուէին դէպ ի Խարբերդ, բայց չհանուեցան։ Գիշերապահ ոստիկանք լուր տուած էին կառավարութեան ի մասին զարմանալի երևութից — Արաբկերի քաղաքին մէջ և դուրսն, գլխաւոր պողոտային երկայնութեամբ, իբր 10 ոպառազինեալ հայ իմբեր իրարմէ հեռու դարանակալ կը սպասէին, որպէս զի երբ ձերբակալեալ Հայերն տարուելու լինէին, յարձակմամբ խլէին զնոսա ոստիկանաց ձեռքէն։

Այսմ իրազեկ՝ կառավարութիւնն զրոյց տարածեց թէ բանտարկելոց յղումն ինչ ինչ պատճառօք յետաձգուած է 10 աւուր համար։ Եւ սակայն հետևեալ առաւօտ իսկ, 120 հետևակ և 27 հեծեալ զօրաց ընկերակցութեամբ՝ պաշտօնեայք առին տարին ամբաստանեալներն ի Խարբերդ։ 120 զօրքն մինչև վեց ժամ տեղ գնացին, իսկ հեծեալք աւելի հեռու։

Այդ դէպքէն քանի մ'ամիս յետոյ Արաբկերի փողոցաց մէջ թղթեր գտնուեցան, ձեռագիր յայտարարութիւններ թէ Հայք պատրաստ պէտք է լինին Յուլիս 15ին ոտքի ելնելու։ Գայմագամն քննեց այդ թղթեր։ Եւ հիշդ Յուլիս 15էն քանի մ'օր առաջ Շմաւոն ձերբակալուեցաւ լեռն՝ քուրդ ցեղապետի մի մատնութեամբ; և հանդերձ փախստական Դանիէլիւ և այլ ընկերօք տարուեցան ի Խարբերդ։

Թրքաց ենթադրութիւնն այն էր թէ Դանիէլ էր Եուսուֆի սպանման գործոյն մեծ դերակատարն, և թէ անմիջապէս յետ սճրին փախած էր ի քուրդս։ յետոյ Շմաւոն ևս գնացած էր մի քանի ընկերօք, և Յուլիս 15 ին քրդային այլ և այլ ցեղերու միացեալ բանակաւ պիտի յարձակէր Արաբկերի վերայ։ Ինչպէս ըսինք, այդ է թուրք կառավարութեան ենթադրութիւն։ Երբէք ապացուցուած չէ թէ Դանիէլ սպաննած է զփոլիսն։

Կը մնայր զԱպահունի հեռացունել Արաբկերէն։ Կեդրոնական կառավարութիւնն կանչեց զնա ի Պոլիս, չգնաց։ Պատրիարք Աշըգեան կանչեց զնա, չգնաց։ Վերջապէս Բ. Դռնէն հրահանգ գնաց Արաբկերի գայմագամին որ լինի մեղմով լինի բռնի հանէ զնա Արաբկերէ։ Ֆէհմի հրամանն հաղորդեց առաջնորդին, և սա, այս անգամ կակղացաւ։ Բայց Արաբկերի հայ կիներ, թուով աւելի քան հազար, զինեալ դիմեցին կառավարութեան և պահանջեցին որ սիրեցեալ առաջնորդն չհեռացուի։ Կառավարութիւնն գիտցաւ այդ իգական փոթորիկ եւս հանդարտել և ստիպել զեղնիկ ի հնազանդութիւն։ Մեկնելու պահուն իւր աթոռին վերայ սաւան մ'անցուց Ապահունի և ըստ գայմագամին թէ ինքն կ'երթայ, բայց անշուշտ նորէն գալու և նոյն աթոռի վերայ իբրև առաջնորդ բազմելու ուխտիւ։

Հեծեալ զօրաց խմբակ մի ընկերացաւ Եղնկայ, որ չկրելով եկեղեցական համազգեստ ի ճանապարհին, էր զինեալ և զգեցեալ այնպէս որ զօրավարէ մի հազիւ կը տարբերէր ըստ երևոյթին։ Նա, յայնժամ իսկ երբ ստիպուեցաւ կատարել բարձրագոյն հրամանն, կատարեց զայն բարձր ի գլուխ և իշխանօրէն, և չերևեցաւ երբէք նկուն կամ ընկճեալ։

Այդպէս չեղաւ վիճակն այն մի քանի աշխարհական աքսորելոց, որք Արաբկերի ազգային շարժմանց մասնակից համարուելով յանկարծ ձերբակալուեցան և առանց ոևէ հարցաքննութեան ի Խարբերդ, և անտի ի Գասթէմունի յղուեցան։ Դոքա քաղաքին հարուստ և երեւելի Հայերէն էին։ Երամեան Յակոբ Էֆէնտիի, որ սա բաց է գործով և շատ շնորքով մարդ, (իրեն հիւր եղած եմք մեք իսկ քանի մ'օր և մօտէն ճանաչած զինքն և զիւրսն) ձերբակալումն տեղի ունեցաւ երբ նա խանութը էր։ չթողուցին մինչև անգամ որ խանութին դուռն փակէ ու այնպէս մեկնի։ Անմիջապէս հեծցուցին սէմէրով ջորւոյ վերայ և քաղաքէն հանեցին։ բարեկամք հազիւ կրցան հեռուն հասնիլ եւ էն և բարձիկ մի դնել սէմէրին՝ վերայ, որպէս զի կարենայր փափկասուն ազնուականն հեծնել ի վերայ։

Այս ամենն այսպէս կատարուելէ յետոյ Արաբկեր հանդարտեցաւ, և դեռ կը մնայ հանդարտ։ Պարզամիտներէ ոչ սակաւք կը կարծեն յուսավրէպ եղած լինիլ և տխրած ու անտարբեր են։ մանաւանդ թէ կան նոցա մէջ բարի անհատներ որք ճշմարիտ ցաւ կը զգան մտա-

ծելով բանտարկելոց և աքսորելոց դառն վիճակն, և որ աւելի ցաւալին է, տեսնելով թէ հաւաքուած խոշոր գումարն որով դժբաղդներուն և նոցա ընտանեաց օգնութիւն պիտի հայթայթուէր, անհաշիւ աներեւոյթ եղած է։

Ի վերայ այսր ամենայնի, Արաբկեր այսօր բարոյական ուժի այնպիսի համբաւ մ'ունի, որ թէև կրնայ երկար ատեն թագուն մնալ, և սրում կրնայ Արաբկերի ժողովուրդն իսկ անգիտակից լինիլ, պիտի վաղ կամ անագան իւր զարմանալի արտայայտութիւններն ունենայ եթէ Բ. Դուռն շարունակէ իւր հայատեաց աշխարհավարութիւնն։

ՏՓՂԻՍԻ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

ՄՇԱԿ, ԱՐՁԱԳԱՆՔ, ՆՈՐ-ԴԱՐ

(Շար. և վերջ տես թիւ 22 և 23)

Ե

Տեղուոյ անձկութիւնն չթողուր որ զատ զատ քննեմք «Նոր-Դար»ի «Արձագանք»ի և «Մշակ»ի լեզուական մասնաւորութիւններն. միայն «Մշակ»ի պիտի ներկայացունեմք մի քանի դիտողութիւններ։

«Մշակ» ահա մի քանի օրէն կը լրացունէ իւր քսաներորդ տարին։ Տփղիսեան երեք օրաթերթից երիցագոյնն է նա և ունի ընդարձակ շրջաբերութիւն։ Կը հաւատամք թէ մեծ դեր կատարած է նա ռուսահայոց լուսաւորութեան գործին մէջ, բայց, դժբաղդաբար, լեզուի մասին թերի և անհոգ գտնուած է։ Ցիրաւի, նա աւելի քան միւս երկու թերթերն մօտ գնացեր է ամբոխի լեզուին, և առանց հարկի որդեգրեր է հեգելու և այլ քերականական ինչ ինչ սխալներ։

(1) Մշակ կը գրէ «վրա», մինչ ամբողջ Հայութիւնն կը գրէ «վերայ» կամ «վրայ։» Նա արդարացունելու համար իւր սխալ, կ'ըսէ թէ պէտք է գրել որպէս ժողովուրդն կը հնչէ, կամ որպէս կը հնչուի։ Ո՛չ, կը պատասխանեմք, չէ պարտ գրել որպէս այս ինչ տեղոյ ժողովուրդն կը հնչէ բառն, այլ ըստ ուղիղ հնչման կամ որպէս պարտ է հնչել։ «Վրա» գրուածն չհնչուիր որպէս կը հնչուի «վրայ» կամ «վերայ։» Մեր նախնիք զայդ բառ հեգած են վերջատառ «յ» ով, և ի հարկէ այդ «յ» չգրուեցաւ որպէս զի բառն հնչուէր իբր թէ «յ» գրուած չլինէր։ Նոքա կը գրէին "կա,, և "կայ,,, "Եդեսիա,, և "Եդեսիայ,, "քո,, և "քոյ,, և կը հնչէին տարբեր։ Մինչև իսկ "առ,, հրամայականն տարբեր հնչում ունէր "առ,, կատարեալ երրորդ դէմքի հնչումէն — սորա "ա,,ն կը հնչուէր երկար, իբր թէ երկու "ա,, գրուած լինէր։ "Կա,, "Եդեսիա,, և այլն ուղղագրութեան մէջ "ա,,ի ձայնն կարճ և կարուկ է մինչ "կայ,, "Եդեսիայ,, "վերայ,, ուղղագրութեան մէջ երկար և քաշուկ է, չնորհիւ վերջատառ "յ,,ի։ Թող յիշուի թէ Զինաց լեզուի բոլոր բառերն այդ սկզբան համեմատ կը գործածուին, մինչ հայերէնի մէջ սակաւաթիւ բառեր միայն։

(2) Մշակ կը գրէ "համոզված,, "չինված,, և այլն, իբր թէ հեռևելով ժողովրդական արտասանութեան։ "Ու,,ի տեղ "վ,, գրել չենք կրնար, վասն զի "Ատուած,, "կռուիմ, համոզուիմ, չինուիմ,, բառերուն "ու,,ն իրեն հետեւորդ ձայնաւորի հետ մէկ վանկ կազմելով կը հնչուի ոչ իբրև "վ,, (v) այլ իբրեւ w (տպելեիու)։ Եթէ Տփղիսի ամբոխն չգիտէ զայդ և կը հնչէ սխալ, Մշակ, թող ուղիղ գրէ և ուղիղ ևս հնչէ, որպէս զի ամբոխն ալ սովորի։ Այո՛, ամբոխն պիտի սովորի ոչ թէ սովորեցունէ։

(3) "Մշակ,, կը գրէ "իր,, փոխանակ զի "Արձագանք,, և "Նոր-Դար,, և այլ բազում թերթեր կը գրեն "իւր։,, Թէև "Մշակ,, Տփղիսի ամբոխին հետևած լինի և յայդմ. աւելի չարդարանար քան միւս դէպքերուն մէջ։ Հայերէն "իր,, և "իւր,, բոլորովին տարբեր բառեր են, տարբեր նշանակութեամբ, տարբեր ուղղագրութեամբ և տարբեր հնչմամբ։ Ունիմք "իր,, (chose), "իրական,, (reel), "իրացունել,. (realiser). ունիմք նաև "իւր,,, "իւրական,. և իւրացունել,, (s'approprier)։ Պէտք է ուրեմն հետեւիլ մեր նախնեաց ուղղագրութեան, և գրել "իր,, արտաքսելով բոլորովին "իր,, աղաւաղեալ դերանունն։

Կը համարձակիմք մեծայարգ Գ. Արծրունւոյ դիտել տալ թէ ինքն իւր ընդհանուր ողջամիտ սկզբանց հակառակ կը գործէ երբ ա՛յնքան կը համակերպի ամբոխի լեզուին։ Ինքն իսկ է ըսողն թէ «Մամուլը պէտք է առաջնորդէ ամբոխը, ոչ թէ ենթարկուի նրան։» Կը խնդրեմք ուրեմն որ, ինքն իրեն սկզբան հաւատարիմ, ի բաց թողու ամբոխի սխալ ուղղագրութիւն ու սխալ քերականութիւն։ Կը խնդրեմք նաև որ քսան տարուան անիրաւ ոխն բաւական համարի և ալ հաշտուի Զ, Ի, ըստ նախդիրներուն հետ։

Զնոյն խնդիր կ'ուղղեմք նաև Արձագանքի և Նոր-Դարի մեծայարգ խմբագրութեանց։

Մեր այս առաջարկութեան կարեւորութիւնն չվիրիպիր Տփղիսեան խմբագրութենէն, յուսամք, և ոչ ալ հայրենասէր ընթերցողք անդէպ կը գտնեն «ՀԱՅՐ»ի մէջ այսպիսի խնդրոյ մի քննութիւն։ Խնդիրն յոյժ ծանր է և մեր իմացական և գրական զարգացման համար կենսական կարեւորութիւն ունի։ Մեր գրականութեան զարգացման ողբալի արգելքներուն մին է արդի հայերէնին բաժանումն յարևելեան և յարևմտեան բարբառ։ Թէև մին միւսին անհասկանալի չէ, անհաճոյ և խորթ կը թուի, որով և միով գրուածն այնքան բաղդ չունենար միւսն խօսող ժողովրդոց մէջ։ Նկատելով մեր ազգի փոքրութիւնն և ընթերցողաց նուազութիւնն, այս լեզուական տարբերութիւն և անոր հետեւանք եղող սահմանափակումն ահագին արգելք մ'է մեր ազգային յառաջդիմութեան։

Հայ լեզուի և հայ իմացական կենաց ապագայն հոգացող ամեն գրագէտ, հեղինակ և լրագրող պարտի բաղձալ և աշխատիլ դարմանն տանելու այս դժբաղդութեան։

Անգործնական և միանգամայն անիրաւ կը լինի պահանջել որ արևմտեան հայերէնն կամ արևելեանն ընդունուի իբրև հայ գրական լեզու. պէտք է որ այդ երկուքն ձուլուին ի մի։ Եւ ի՞նչպէս ձուլուին — փոխադարձ զիջողութեամբք։ Եւ ի՞նչ սկզբանց վերայ պիտի լինին զիջողութիւնք. — ի հարկէ ընդհանուր քերականական և բուն հայերէն լեզուի սկզբանց վերայ։

Պէտք է որ—

(1) երկոքին կողմանք ևս ի բաց թողուն ամեն ինչ որ էական աղաւաղում և հակաքերականական է։

(2) Իրարմէ որդեգրեն ինչ որ լաւագոյն է իբրև լեզու և ինչ որ մաքրագոյն է իբրև հայերէն։

(3) Ուր որ երկուքն ալ թերի են, առնուն հին հայերէնէն կամ ո և է ուղիղ զաւառաբարբառէ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Շատ անգամ կը պատահի որ մայրաքաղաքիս հայ ժողովրդեան մեծամասնութիւնը նոր բան մը չլսելով հայկական շարժմանց վերայ, կը սկսի խորհիլ և մինչ իսկ անտարբերութեամբ վճռել թէ Հայոց խնդիրը մեռած է, եղած ջանքերն ապարդիւն եղած են։ Այսպիսի ատեն յանկարծ կը տեսնես որ կառավարութիւնը իւր մէկ նոր անօրինութեամբ ժողովրդեան միտքը բան կը

ձգէ, անոնց խորհիլ կուտայ թէ հայկական խնդիրը մեռած չէ, թէ հայ հայրենասիրական ընկերութիւնք կը գործեն։ Կառավարութեան այս տեսակ ընթացից մէկ օրինակը տեսնուեցաւ այս օրերս։ Տեղական հայ լրագրաց մէջ քանի մը շաբաթ առաջ հրատարակուեցաւ թէ Պատրիարքին մէկ կոնդակը պիտի կարդացուէր մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ։ Այդ կիրակի առաւօտ հետաքրքիրք մեծ բազմութեամբ եկեղեցիները կը դիմեն սակայն կոնդակին ընթերցումը տեղի չունենար։ Ապա լսեցինք թէ Ոստիկանութեան նախարար Նազըմ Պէյ շաբաթ երեկոյ պատրիարքարան երթալով հրամայած է որ կոնդակին օրինակներն անմիջապէս եկեղեցիներէն առնուին, վասն զի անոր ընթերցումը տեղի պէտք է չունենար։ «Փունջ» լրագիրը, որ կանխաւ բաւական տեղեկութիւն տուած էր կոնդակին պարունակութեան մասին խափանուեցաւ։ Այս ամենը զարմանալի է արդարև, մանաւանդ եթէ յիշենք թէ կոնդակը կառավարութեան թելադրութեամբ կամ հրամանաւ գրուած էր։ Կ'երեւի թէ կառավարութիւնն ապա խորհեցաւ որ կոնդակին ընթերցմամբ ժողովուրդը ձրի տեղեկութիւններ պիտի ստանար գաղթական Հայոց ինչ ինչ գործոց վրայ, և ուստի արգիլեց անոր ընթերցումը։ Կեավուրին խելքը յետոյ կուգայ, սակայն մահմետականին խելքն ալ միշտ արագաշարժ չէ։

Այս օրերուս մէկ կարեւոր դէպքն էր Խորէն արքեպիսկոպոս Նարպէյի յանկարծական մահը։ Ինչպէս յայտնի է, Նարպէյ սրբազան բաւական ժամանակ առաջ պատրիարքական կոնդակաւ դադրեցուեցաւ եկեղեցական ամեն պաշտօններէ, վասն զի, կ'ըսուի թէ, պալատական լուրեր կը հաղորդէ եղեր եւրոպական լրագրաց կամ եւրոպացի պաշտօնական անձանց։ Խորէն արքեպիս կոպոս իւր պաշտօնանկութենէն հետէ բաղդատաբար թշուառ վիճակ ունէր։ Իւր ամեն շարժումը կը դիտուէր։ Ազգային վարչութենէն խնդրեց որ իւր նիւթական անձուկ վիճակին դարման մը ըլլայ, սակայն այդ խընդիրք մերժուեցաւ։ Իւր յանկարծական մահը շատերու մտաց մէջ կասկածներ կը յարուցանէ իսկզբան, սակայն չկարծուիր որ կառավարութիւնն ուղղակի կապակցութիւն ունենայ անոր մահուան հետ։ Բայց շատ հաւանական է որ կարօտութիւն և վիշտ փութացուցին Նորին Սրբազնութեան վախճանը։ Յուղարկաւորութիւնը շատ փառաւոր հանդիսիւ չկատարուեցաւ։ Թոյլ չտրուեցաւ որ լրագիրք եկարօրէն գրեն Սրբազանին մահուան վրայ և ծանուցանեն յուղարկաւորութեան հանդիսին ժամը։ Պատարագի և օծման արարողութիւնք այս ուրբաթ առաւօտ կանուխ սկսան, սակայն դարձեալ ժողովրդեան խուռն բազմութիւն ներկայ եղած էր այդ արարողութեանց։ Տարակոյս չկայ որ եթէ կանխաւ ազդարարութիւն եղած ըլլար կամ գէթ արարողութիւնք այնչափ կանուխ չսկսէին, ահագին բազմութիւն պիտի հաւաքուէր յուղարկաւորութեան հանդիսին առթիւ։

Ուրիշ աւելի համակեցելի եպիսկոպոս մը, Գարեգին Սրբազան Սրուանձտեանց, աշակերտ Խրիմեան Հայրիկի, այժմ ծանր հիւանդ կը պառկի Եէտի-Գուլէի հիւանդանոցին մէջ։ Բժշկական ամեն կարելի խնամք կը տարուի Սրբազանին, որ այսու ամենայնիւ վտանգէ զերծ չէ դժբաղդաբար։

Նորընտիր կաթողիկոս Խրիմեան Հայրիկի վրայ շատ յաճախ լուրեր չեն առնուիր։ Պաշտօնական տեղեր հարկ եղած զեկուցմունք եղած են, սակայն չեմ գիտեր թէ Նորին Սրբազնութեան ուղեւորութեան յապաղման ի՞նչ պատճառ կայ։ Ոմանք երկիւղ ունին որ կաթողիկոսին թոյլ չտրուի վերջապէս Կ. Պոլսոյ ճամբով երթալ ի Ռուսիա։ Իրօք մեծապէս փափաքելի է որ Հայրիկ անգամ մը ևս Կ. Պոլիս այցելէ, սակայն իւր ինչ ճամբով երթալն վերջապէս այնքան մեծ կարեւորութիւն չունի. բաւական է որ այս մեծ եկեղեցականն անգամ մը բազմի կաթողիկոսական գահուն վրայ։

Կ. Պոլիս
22 Նոյ. 1892

ԱՆԱՆՈՒՆ

ՆԵՄՏԿ ԶՄՇԿԱԾԱԿԻ

Զմշկածակ, 12 Հոկտ. 1892

Գողաթի կառավարիչ փաշան թուէս մէկ ու կէս տարի առաջ փորձեց զինու զօրութեամբ հնազանդեցուցանել Տաւրոսեան մի քանի ցեղեր. առ այս միացաւ Գողաթի շրջակայքը բնակող Խարապաշ ըսուած ցեղին հետ և յարձակեցաւ Շամուշախի ըսուած ցեղերուն վրայ։ Յարձակողք 1200 էին թուով, իսկ ապստամբք 70. սոքա ստիպուեցան ուրեմն անտառներն ապաստանիլ և զօրաց դէմ դնել։ Ապստամբաց օգնութեան հասաւ ցեղապետ Խշտիկ Ահմէտ իւր ցեղով, որ Խաճոլլոց ցեղն է, և փաշայի զօրքն յաղթուեցաւ, որոց կորուստն 150 հոգի կը հաշուուէր, ի համարի լինելով միրալայն և զինուորական բժիշկն։

Ասոր վրայ երկար ատեն զրոյց պատեցաւ թէ բարձրագոյն հրամանաւ զօրք պիտի գայ ապստամբներն պատժելու։ և իրաւ Խարբերդէն երկու վաշտ զօրք եկաւ, բայց Զմշկածակի մէջ նստաւ երկու ամիս, և ապա ետ կանչուելով թողուց գնաց։

Այս ամենուն արդիւնք այն եղաւ որ Քրդեր չափազանց համարձակութիւն առին և արտակարգ հարստահարութիւններ գործել սկսան, գիւղեր կոխել, աւաններ կողոպտել, հօտեր քշել տանիլ, որոց օրինակներն, խմբագրապետ իմ, եթէ պատմէի ընդարձակօրէն թերթդ քանի մը անգամ սնով կը լեցուէր։ Միայն վերջերս պատահածներէն մէկ երկու բան յիշեմ, հերիք է։

Չկայ գիւղ մը որ այս տարի հարիւրներով ու հազարներով քէսամ (քրդերու տրուած տուրքին այսպէս կ'ըսեն) տուած չլինի Քրդաց։ Ատով ալ գոհ չլինելով, Քրդեր սկսան յայտնի կամ գաղտնի գրաւել գիւղերու եղներն ու այծերն, դառներն, ձիերն և ջորիներն, ցանելու սերմն ու խոփն։ Եթէ մէն մի գիւղի մէջ կը գտնուին դեռ մի քանի տուներ, որ տէր են տակաւին իրենց ըստացուածոց մէկ մասին, այն ալ մէկ այծին համար 12 ղուրուշ, մէկ եղան համար 50ղ., մէկ ջորւոյ համար 200 ղ. Քրդաց տալով ապահովագրած են առ ժամանակ մի։

Ս. Թորոսի գիւղերէն մի քանին իրենց բոլոր անասուններէն զրկուեցան. Մամսայ գիւղն նմանապէս։ Քրդեր Միատուն ըսուած գիւղի քահանայն և երկու երիտասարդներ կապած գիւղէն դուրս հանեցին և սկսան տանջել, ապա գիւղացիք շատ աղաչանօք 15 ոսկի տալով փրկեցին թշուառներն։

ՀԱՅՐ

1893 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(1) «Հայր» 1893ին պիտի բաղկանայ 16 երեսներէ, փոխանակ 8 երեսի. երեսի ծաւալն քիչ մի փոքրացած, և թուղթն ազնուագոյն։

(2) պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ։

(3) տարեկան բաժնեգին՝ երկու տոլար կամ տասն ֆրանք ամեն երկրաց համար։

(4) բաժնեգինք պէտք է վճարուին կանխիկ։

Այս «կանխիկ» բառին բուն միտքն ոմանց անհասկանալի մնացած է, կամ գոնէ կանխիկ վճարման բուն նպատակն։ Այդ նպատակ մեք իսկ լաւ իմացած չէինք, մինչև որ երկու տարուան փորձառութիւնն օգնեց մեզ ըմբռնելու թէ ինչո՞ւ բոլոր աշխարհի լրագրութեան ընդհանուր օրէնք եղած է կանխիկ վճարումն։ Հայ լրագրութիւնն ևս պարտի այդ օրէնք յարգել տալ ժողովրդեան։

Մեր ժողովրդեան մէջ ընթերցանութեան սէրն դեռ զօրաւոր չլինելով՝ պէտք չէ շատ ճչդութեամբ

վարուիլ, ըսինք մինչև ցարդ մեք մեզի, և արդիւնքն այն եղաւ որ տարին վերջացաւ և մեր բաժանորդաց իրր մէկ երրորդն դեռ չէ վճարած։

«Հայք» Նոր տարիին պիտի յղուի անոնց միայն որք իրենց բաժանորդագրութիւն նորոգած կը լինին և վճարած։ Կը խնդրեմք որ մեր յարգելի բաժանորդք չցաւին ըսելով թէ մի՞թէ իրենց չե՞մք վստահիր։ Խնդիրն վստահելու վերայ չէ, այլ կանոնաւորութեան վերայ է։ Մեր այն բաժանորդներ որք դեռ վճարած չեն, պատուաւոր, վստահելի և կարողութեան տէր ազգայիններ են մեծ մասամբ, և ինչո՞ւ իրենք ևս չհասկնան ինչ որ հասարակ գործաւորն անգամ կը հասկնայ —թէ կանխիկ վճարելով՝ բաժանորդն աւելորդ նեղութիւն կրած չլինիր, զի տարին մէկ անգամ կը կրէ նեղութիւնն, բայց զիմբագիրն կը փրկէ բազում աւելորդ նեղութիւններէ։

Մեր յարգելի բաժանորդաց ժամանակ տուած լինելու և միանգամայն «Հայք»ի ընդարձակման համար հարկաւոր եղած պատրաստութիւններն կատարելու համար՝ 1893ի առաջին թիւն պիտի հրատարակեմք Յունվար 15 ին։ Մինչև այդ թուական կը բաղձամք ունենալ մեր բաժանորդաց որքան հնար է կատարեալ ցանկն, որպէս զի տպագրել տալով՝ ամեն անգամ հարիւրաւոր հասցէներ գրելու անհամ յոգնութենէն ալ փրկուիմք, ինչ որ անկարելի եղաւ ընել այս տարի, քանզի մինչև վերջ սպասեցինք ցանկին ամբողջացման։

Վերջապէս եթէ մեր արդոյ բաժանորդք դիտնային թէ մեր վերայ զբաղմանց որպիսի ճմլիչ ծանրութիւն կայ—թէ մեք առանց օգնականի ստիպուած եմք կատարել երկու կամ երեք մարդու գործ —կը կարեկցէ ին մեզև կը փութային կանխիկ վճարելով ազատել զմեզ կարգ մի աւելորդ թղթակցութիւններէ և հոգերէ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱԽՃԱՆ ԴԵՐ· ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՊԷՅԻ

Նոյ· 16ին վախճանած է Խորէն արք· Նարպէյ, որոյ վերջին տարին տառապալից եղած էր։ Մահուան օրն, ընդ երեկն, առ երևոյթս յանկարծական տկարութիւն մի զգացած է Նորին Գերապատուութիւն, և բժշկաց ժամանելէն առաջ մեռած է իւր քեռառն բնականին մէջ ի Բերա։

Խորէն Նարպէյ 59 տարեկան էր, ծնած լինելով 1833ին։ Նա ուսած էր ի վանս Մխիթարեանց ի Վենետիկ և կրօնաւորի կարգ ընդունած էր։ Յետոյ դառնալով ի ծոց Մայրենի եկեղեցւոյ՝ եպիսկոպոս ձեռնադրուեր էր յամին 1867։

Այս նշանաւոր եկեղեցական ազգային կղերական դասուն մէջ առաջնակարգ դիրք բռնած էր իւր լեզուագիտութեամբ և բանաստեղծական բարձր տաղանդի շընորհիւ։ Բազում բանաստեղծական և կրօնական աշխատութիւններ ունի, ի համարի որոց կրնայ յիշուիլ իւր թարգմանութիւն Լամարթինի քերթուածոց։

Կ· Պոլսէն «Հայքի» ուղղալ թղթակցութենէն կ'երևի թէ մեր եկեղեցական բանաստեղծն ալ ոչ-եկեղեցական բանաստեղծ Գամառ Բաթիպայի նման, նիւթական կարօտութեան մէջ անցուցած է իւր կենաց վերջին օրերը։ Զեմք համաձայնիր անոնց հետ որք զՊատրիարք Աշըգեան գծուած անձնական ատելութեամբ լի կը ներկայացունեն հանդէպ հանգուցեալ Սրբազանին, և Սորա պաշտօնազրկութեան և բոլոր հետեւորդ նեղութեանց պատասխանատուութիւնն ամբողջովին կը բառնան Նորա վերայ, քանզի տարակոյս չկայ թէ Աշըգեան Պատրիարք Բ· Դրան ուղղակի կամ անուղղակի ճնշման ներքև կը գործէ։ Այսու ամենայնիւ բաւական յստակ կ'երևի թէ Պատրիարքն ալ ունի իւր պատասխանատուութեան բաժինն այս դէպքին ինչպիս բոլոր ուրիշ անհաճոյ դէպքերու մէջ։

Այնթապէն կը գրեն մեզ Նոյ· 16 թուականաւ,

Երկրին քաղաքական վիճակն տակաւ կը յուռենայ։ Մարդ կը վախէ շնչառել իսկ։ Երկիրն լի է ծպտեալ պաշտօնէիւք։ Տր· Պողոսեան, Փիլիպոս Էֆ· և Պաղտասար Գուլումճեան ձերբակալուեցան մեծ հանդիսիւ չորս շաբաթ առաջ։ Թէ՛ առ երեւոյթս և թէ՛ իրապէս անմեղ են։ Խիստ դատաքննութիւնն երևան չհանեց ոևէ բան իրենց դէմ։ Բայց տակաւին բանտարկեալ են և ոչ ոք գիտէ թէ երբ պիտի ազատին։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագիր,

Հայկ· Միութիւնն փառաւոր նիստ մ'ունեցաւ Դեկտ· 3ին, ուր մեծանուն նկարիչ Յ· Այվազովսգի հը բաւիրուած լինելով ներկայ գտնուեցաւ իւր Ազնիւ Տիկնոջ հետ։

Յետ ողորական գործողութեանց, ատենապետն Մեծ· Տի· Թաւշանճեան արժանաւոր բանիւք ներկայացուց ժողովին զմեծայարգ հիւրն և նորա ազնուափայլ Տիկինն։ Օրիորդ Այվազեան գեղեցիկ ուղերձ մի ասաց ուղղեալ առ հռչակաւոր հայ ծովանկարն, նոյնպէս և Մեծ· Տր· Այվազեան ներբողեց պատշաճ բանիւք զհայազգի հիւրն։ Ազն· Տկն· Պ· Յակոբեան Մեծ· Տր· Ա· Յովհաննիսի հետ յոյժ քաղցր և սրտայոյզ կերպիւ երգեց «Ծիծեռնակն։» Ուժգին ծափահարութիւնք ստիպեցին երգիչ երկեակն նորէն երգելու, և սակայն Տր· Ա· Յովհաննէս միայնակ հաճեցաւ երգել երկրորդ մը։

Մեծ բազմութիւն ներկայ էր այս նստին, որ Միութեան ընդ միշտ յիշատակելի երեկոյթներուն կարգն անցաւ։ Ամեն Հայ հպարտ և ուրախ էր այդ երեկոյ՝ զՓռ· Այվազովսգի տեսնելու և լսելու, որ արդարև ևս կարճ խօսքով բայց ազնութեամբ բացատրեց իւր շնորհակալութիւն՝ եղած սքանչելիր ցոյցերուն համար։

ՈՄՆ Ի ՆԵՐԿԱՅԻՑ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ «ՀԱՅՔ» ԹԵՐԹՆ

...Խմբագիր,

Դեկտ· 10ի Շաբաթ երեկոյին ընդ ատենապետութեամբ Մեծ· Տի· Պողոս Յակոբեանի, Հայերու ընդհանուր ժողով մի տեղի ունեցաւ, ժողով մի, որոյ փայլն այն պարագայէն կուգար մանաւանդ որ Նիւ Եորքի Հայ Գաղթականութեան ուսեալ բան հասկացող և բարձր դասակարգի անհատներուն գրեթէ ամենն ներկայ էին։ Տր· Տատրեան, Տի· Գ· Գասպարեան և Տի· Մ· Եաղուպեան անակնկալ արգելք ունենալով ցաւ յայտներ էին որ չէին կրնար ներկայ գտնուիլ։

Յարգելի ատենապետն մի քանի պատշաճ խօսքերով բացատրեց թէ ժողովուած էին, ինչպէս հրաւիրատոմսերու մէջ ալ ծանուցուած էր, «Հայք» թերթի հրատարակութեան օգնելու նպատակաւ։ Իրր 25 տարիէ ի վեր Ամերիկա ապրած լինելով, ինքն, Տիար ատենապետն, շնորհիւ հայ թերթերու, ըսաւ, չէ մոռցեր հայերէն լեզուն, և մանաւանդ հաճութեանմբ կը կարդայ «Հայքն»։

Տիար ..., քաջ ուսեալ երիտասարդն յայնժամ խօսք առնլով բացատրեց մամլոյ դերն, անյաղթելի ոյժն։ Ըսաւ թէ Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ լոյս տեսնող հայ թերթերն շուքի մէջ մեծցող ծաղկանց նման են, իսկ արտասահմանեան թերթք են զերդ ծաղկունք աճեալք ի լոյս կենսաւէտ արեգին։ Եւ ամեն ո՛վ որ հոտոտեր է «Հայք» թերթն, տարակոյս չկայ թէ զգացած է նորին զմայլեցուցիչ բուրումն իբրև զգեղափթիթ ծաղկի։ «Հայքն» արտասահմանի հայերէն թերթից ամենաընտիրն է, ըսաւ, և նշանաւոր է, ի մէջ այլոց, իւր ճըշմարտախօս անկողմնակալութեամբ հանդէպ զանազան կուսակցութեանց։ Պէտք է որ ապրի այսպիսի ողջամիտ թերթ մի։

Այսմ յաջորդեց Կիւրինցի ուսեալ երիտասարդ մի, որ նախորդ ատենախօսին մտքերն շեշտեց և ըսաւ թէ ինքն երկու տարիէ ի վեր անհուն փափաքով կարդացեր է «Հայք»ն, և բոլորովին սիրահարեր է անոր, և յայտարարեց թէ ինքն բոլոր ուժով պիտի աշխատի անոր բաժանորդներն յաճախելու։

Տր. Ա. Իշխանեան ևս մի քանի խօսք ըսաւ, ցաւ յայտնելով որ ինքն հայերէն խօսելու քիչ վարժ լինելով չէ կարող իւր բոլոր համարումն բացատրել ըստ արժանւոյն ընդ խնդրով եղող պատուական թերթին նկատմամբ։

Տի. Գասպարեան, Կեսարացի վաճառականն, նոյնպէս խօսեցաւ մեծ համակրանօք, թէև տաճկերէն լեզուաւ, և ըսաւ թէ ինքն խորին ախորժով կը կարդայ «Հայքն» և կ'օգտի անկէ ամեն տեսակետով։

Ապա Տի. Ց. Թաւշանճեան խօսեցաւ բաւական երկարօրէն, իւր սովորական օծուն և ճկուն ոճով։ Այս երեկոյի բազմութիւն, ըսաւ, կը ցուցնէ թէ Հայեր վերջապէս այնքան անընթերցասէր չեն որքան կարծուած է, թէև տակաւին շատ հեռու են Ամերիկացւոց պէս մի լի լինելէ թերթերու։ Երբ Ամերիկացւոյ մի տունն կ'այցելեմք, նորա սեղանին վերայ այլ և այլ լրագրերու դէզ մի միշտ կը տեսնեմք։ Մեք Հայերս ալ իրաւ շատ լրագրեր տեսած եմք հրապարակի վերայ, բայց մեր ստամոքս շատ մեծ զանազանութիւն լրագրական խնջոյից չկարենալով առ այժմ մարսել, գոհ կը լինի եթէ գտնէ մէկ կամ երկու լաւ տեսակներ գտնէ։ Ցիրաւի բազում թերթեր երևցած են Հայ Գաղթականութեանց մէջ, բայց իբրև ասուպ առ վայրկեան մի փայլեր ու անցեր գացեր են։ Եղած են թերթեր որք իրենց առաջին մէկ քանի թիւերով սպառած լմնցուցած են իրենց բոլոր լոյսն և հետևապէս ալ ժողովուրդն անոնց իւր կռնակ դարձուցեր է շուտով։ «Հայք» բացառիկ բաղդի արժանանալու ընթացք ունեցեր է ի սկզբանէ մինչև այս օր։ Ար դէն երկու տարի է որ կը հրատարակուի, բայց երբէք իւր ոյս չնուազիր։ Կարծես տակաւ աւելի կը պայծառանայ։ Անցեալ օր կառքով վերի քաղաք կուգայի. յանկարծ գրպանիս մէջ գտայ «Հայք»ի մէկ թիւն, և սկսայ կարդալ, և կարդացի ու կարդացի մինչև վերջն։ Ինձ այնպէս երևցաւ թէ երբէք այնքան ընտիր, լեզուով և խորհրդով պատուական հայերէն թերթ կարդացած չէի կենացս մէջ։ Այս թերթ պէտք է ապրի, վասն զի արժանի է ապրելու։ Այս նպատակաւ Ցանձնախումբ մի կազմուած է, որ նպատակ ունի բաժանորդ գտնել։ Կրնամք այս երեկոյ հոս քիչ մի բան ընել։ Ո՛վ կամի բաժանորդ թող գրուի, ո՛վ կարող է, թող աւելի ևս տայ և օգնէ թերթին աւելի յաջողութեան։

Ապա Տի. Փ. Այվատ յայտարարեց թէ ինքն թէև ջերմ համակիր չէ խմբագրին, բայց կը յարդէ թերթն, և թէպէտ իւր «Արարատ»ն անյաջողութեան դատապարտուած է, կը բաղձայ որ «Հայք» յաջողի։ Վճարեց երկու բաժնեգին, մին իրեն համար և երկրորդն ալ արժանաւոր բայց վճարելու անկարող մէկուն համար։ Ժողովն ուժգնօրէն ծափահարեց ատենախօսն։

Եղան նաև քաղցրալուր նուագածութիւններ։

Այն ժողովոյ մէջ իբր 80 թալէռի գումար մի գոյացաւ նուիրատուութեամբ և բաժանորդագրութեամբ որ պիտի շարունակուի։

Եւ ժողովն բարձր գոհութեան զգացումներով ապարտեցաւ։ Գ. Կ.

— Նիւ Եորքի մէջ հայ հարսանիք մ'ևս տեղի ունեցաւ օրերս։ Մեծ. Տիար Պետրոս Շալճեան, ճարտար կազմարարն, ամուսնացաւ Օրիորդ Բոզի Գէորգեանի հետ։ Այդ առթիւ ընթրիք տուաւ կնքահայրն Մեծ. Տի. Եսայի Մաթիկեան, ի Պրուքլին, Տի. և Տկն. Սինանեաց հիւրասէր յարկին տակ։

Նորապսակ ամուսիններն շնորհաւորելով, կը մաղթեմք որ սառօսն մնացեալ ամուրիներու դէլուխն լինի։

«ՀԱՅՔ»Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

(1) Լինի (Մաս) Ցանձնախմբին և համայն հայրենակցաց որք յօժարութեամբ պատասխանեցին նորա հրաւէրին։

Ահաւասիկ Լինցի հանգանակող հայրենակցաց անուանց ցանկն.—

Մեծ Տեարք	տոլար	սենթ
Խ. Կարապետեան	5	00
Ց. Վահանեան	5	00
Լ. Սէյրան	2	00
Պ. Յակոբեան	3	00
Տ. Յակոբեան	2	00
Ս. Ակոճեան	2	00
Պ. Պօղիկեան	2	00
Կ. Վահանեան	3	00
Ց. Մ. Գրիգորեան	2	00
Գ. Էլմասեան	3	00
Ց. Աճուրեան	1	00
Ց. Մազմանեան	1	50
Գ. Մաղաքեան	0	50
Ա. Կարապետեան	1	00
Ց. Բէօսէյեան	0	25
Կ. Մակարեան	0	25
Հ. Մ. Աւագեան	1	00
Ց. Խչիկեան	1	00
Ա. Նահարեան	2	00
Շ. Ղազարեան	2	00
Ց. Եէկոյ	1	00
Ցանձնախմբին գանձանակէն	9	50
Ցանձնախմբին տարեկան նուիրատուութիւնն 1893ի սկիզբէն	25	00
գումարն ամբողջ	75	00

«Հայք» Լինի հայրենակցաց եռանդուն ու արդիւնաւէտ գործունէութիւնն կ'ողջունէ իբրև հաղուագիւտ երեւոյթ։

(2) Բհուզի (Նիւ-Եորք) հայրենակցաց, որք ևս մասնակցիլ փութացած են «Հայք»ի հրատարակութեան օգնելու շարժման.—

Ահաւասիկ նուիրատուաց անուանքն.

Մեծ. Տեարք Հ. Ց. Բաթլեան 1թ. 75ս., Ց. Տ. Պօղոսեան 1թ., Ս. Կոչկարեան 50ս., Ց. Մ. Յակոբեան 25ս., Ց. Տ. Ղուկասեան 25ս., Ս. Գինոսեան 25ս. ընդ ամենայն 4 թալէռ։

Բհուզի մեր փոքրաթիւ գաղթականաց այս հանգանակութիւն մասնաւոր գովութեան արժանի է, քանզի կը ցուցնէ թէ ազգային գործոց օգնելու համար պէտք չէ սպասել որ հարուստներն կամ ահագին բազմութիւնք գործեն։ Ամեն ոք իւր փոքր բաժին ընելով մեծ բան կը լինի։

(3) «Հայոց Խրախուսական Միութեանն» Սուրաբայայի ի Ճավա, որ յղած է մեզ 400 ֆրանքի փոխանակագիր մի, յորում երեք բաժնեգներ կան և 369 ֆր. 25 սանթիմն նուիրատուութիւն է։

Ահաւասիկ հանգանակող հայրենակցաց անուանց ցանկն.—

Մեծ. Տեարք	Ֆր.	սան.
Մ. Տէր Դ. Նահապետեան	30	75
Սամ Յովակիմ	30	75
Պ. Մ. Պօղոս	20	50
Գ. Կ. Պետրոս	20	50
Ց. Ն. Գալստեան	20	50
Ց. Տէր Կ. Յորդանանեան	20	50
Գ. Խ. Թադէոսեան	10	50
Ե. Տէր Յովհաննէս և Ց. Բօլդի	10	25
Գ. Տէր Ապգար	5	00
Հ. Խր. Միաբանութեան սնտուկէն	200	0.
Գումար	369	25

որ հաւասար եղաւ ամերիկեան 71 տոլարի։

«Հայոց» Խրախուսական Միաբանութիւնն» մեր այն հայրենասիրական ընկերակցութիւններէն է, որոց խոհուն և օրինակելի գործունէութեան վերայ կրնամք պարծենալ

(Շարունակելի)

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ
"ՀԱՅՔԻ"
1892 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ

Երես

Կոնդակ Աչըդեան Ս. Պատրիարքի ... 1
Պատասխան խմբագրին առ Սր. Պատրիարք Հայրն ... 2
Հայ Ազգութիւն ... 3
Սոսիալիզմը Հայ Ժողովրդի մէջ ... 5
Հայոց Ցառաջդիմութիւն Օսմանեան իշխանութեան ներքեւ, Տաճկահայոց Ազգային Քաղաքականութիւնն 9
Թէ Ինչպիսի ինքնօրինութիւն պէտք է օսմանեան Հայաստանի. Հնչակեան պահանջմանց անտեղութիւնն 11
Հայ Ազգին մահացու պակասութիւնն ... 17
Խմբագրական Սկզբունք ... 25
Հայ Եկեղեցականք ... 34
Պատեհ ժամ ... 41
Հայաստան և Հայ Գաղթականութիւնք ... 49
Հայկական Ցեղափոխութիւնք ... 58
Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսական Ընտրեալն Ազգին 60
Վարդանայ Աւետեաց Խոսութիւնն ... 61
Հայ Ցեղափոխականք ... 66
Արտասահմանի Հայ Թերթեր ... 73
Նոր Քայլ ... 82
Մեծ Մարդեր Հայոց մէջ ... 89
Հայ Իմացական Կեանք ... 97
Հայ Մարդու Ցուցահանդէս յԷջմիածին ... 105
Հայաստանի Ճգնաժամն ... 117
Զոհողութիւն Պայման Փրկութեան ... 121
Հայկական Ինքնավարութեան Փորձն Հայ Գաղթականութեանց մէջ 130
Հայ Երիտասարդութիւն ... 133
Լորիս Մելիքոֆ Հայկական Խնդրոյն վերայ ... 134
Օսմանեան պետութեան մօտալուտ կործանումն 138
Ցեղափոխական Տրամադրութիւն Տաճկահայոց ... 145
Հայն ի Շարժման ... 147
Հայ Հայրենասէրք և Հայ Հանճարք ... 154
Ո՞վ է Հայրենասէր և Ո՞վ է Հանճար ... 162
Բողոքագիր Ողղեալ Մեծ Պետութեանց Եւրոպիոյ 164
Արտասահմանեան Հայոց Ընկերային Զարգացումն 169
Պատրիարք Աչըդեանի Նոր Կոնդակն ... 172
Հայն Ինչո՞ւ կը Շարժի ... 179
Խօսք առ Հայրենասէրս ... 185
Արաբկերի Շարժումն ... 186

ԱՔՈՂՋԱՔԱՆԱԳԱՆ

Երկայնակեցութիւն և Արհեստ ... 31
Ժողովրդային Ախտաբանութիւն. Մանրէք 140, 150
Հնտախտի Նոր Դարմաններ ... 141
Հնտախտէ ազատ մնալու միջոց ... 150

ԲԱՆԱՍԻՐԱԳԱՆ

Հայերէն Լեզուն-Հոմանիշք ... 4
Ակնայ Հայկական Երգեր ... 4
Հայկական Առածք և Ասացուածք Ակնայ ... 142
Առածք, Ասացուածք և Զրոյցք Հայոց Նոր-Նախիջեւանի 166
Տփղիսի Հայ Լրագրութիւնն և Հայերէն Լեզուն 171, 178, 188

ՔԵՆՔՈՒՆԱԾՔ

Տալուորիկցի կարիճի Քայլերգը ... 119
Հայ Ապրինք ... 133
Սիրէ Հայը ... 143
Ռաֆայէլ Պատկանեանի Յիշատակին ... 149
Դարմանն Հայաստանի ... 158
Խրատ Հայ Հեղինակին ... 163
Միութիւն ... 174
Առ Սր. Խրիմեան Հայրիկ ... 174
Կիկոն ի Գասբմ-Փաշա ... 181

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գաբրիէլ Էգնայեան (պատկերով) ... 28
Մկրտիչ Խրիմեան ... 113
Յովհաննէս Այվազովսկի (պատկերով) ... 177

ՊԱՏԵՆԱԲՈՍԱԿԱՆ

Մարզպան ... 42
Հայաստան, Քրդաստան և Միջագետք ... 75
Մարզպանի Լեզուն ... 126
Ուղեւորութիւն ի Լեռան Արարատ ... 156

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՆԱՄԱԿ

Ակնէ ... 181
Այնթապէ ... 13
Եգիպտոսէ ... 51, 85, 93, 125, 132, 181
Երեւանից ... 29
Էջմիածնէ ... 99
Թեհրանէ ... 44
Թրոյէ ... 13
Խարբերդէ ... 44, 78, 158
Կիլիկիայէ ... 50, 69, 86, 127
Կոստանդնուպոլսէ
Անհրաժեշտ ... 19, 37, 62, 131, 141, 180
Ուրիշներէ ... 12, 20, 21, 68, 78, 84, 100, 101, 124, 157, 165, 881
Ճավայէ ... 38, 173
Յարեւելից ... 52
Զմշկածակէ ... ——— ... 189
Պաթումէ ... 20
Պարսկաստանէ ... 109
Սմարանդէ ... 108
Սեբաստիայէ ... 124
Վանէ ... 92
Բուսչուքէ ... 110
Փարիզէ ... 28, 123
Քալիֆորնիայէ ... 38
Նամակ Խմբագրէն Առ «Արձագանք» ... 53
Նամակ Առ Խմբագիրն ... 122, 129, 166

ՋԱՆԱՋԱՆ

Ամերիկայի Հայերու մասին 23, 54, 55, 63, 93, 95, 129
Ամերիկեան Բարք ... 21
Ամերիկայի Հայերն ինչ օգտակար արհեստներ կրնան սովրիլ ... 14
Ամերիկայի Հայ Գաղթականութեան Պատմութիւնն 26, 36, 43, 52, 70, 106
Ամերիկայի մէջ Հայ Ուսանողք ... 24
Ամերիկայի մէջ Օտար Լեզուաւ Լրագրեր ... 45
Աղէտք Զէյթունի ... 83, 91, 98
Անգլիոյ Քաղաքականութիւնն յԱրեւելս ... 100
Գաղթականութիւն յԱմերիկա ... 44
Իմ Հայրենասիրական Լրագրոյս Երրորդութիւնն ... 164
Խմբագրական դիտողութիւնք 129, 137, 145, 153, 161, 177
Ծանր խռովութիւնք Հայաստանի մէջ ... 118
Ծիծաղներ ... 45
Կեդրոնական Ցանձնախումբ ... 13, 122, 123, 131
Հայոց Պատմութենէն Դաս մի ... 35
Հանդէս Վեցերորդ Տարեդարձի Հայկ. Միութեան 60
Հայոց Խրախուսական Միաբանութիւն ի Սուրաբայա 93
«Հայք» ... 137, 153, 177
Հրէա՞յք ի Հայոց թէ Հայք ի Հրէից ... 142
Մշոյ Դաշտը ... 126, 132
Նմոյշ ի Գրուածոց Խրիմեան Հայրիկի ... 101
Ուղեւորութիւն իմ ի Կիլիկիա և ի Փոքր Ասիա ... 69, 76
Ռաֆայէլ Պատկանեանի Թաղումը ... 149
Քաղաքական, Ազգային և Տեղական Լուրեր ... 7, 14, 22, 30, 38, 46, 62, 71, 78, 86, 94, 102, 111, 127, 134, 142, 150, 159, 166, 174, 182, 190